ԻԴ ՊՐԻՆՏ ծառայությունների մատուցման պայմանները

(Terms and conditions)

1. ԻԴ ՊՐԻՆՏ կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու համար օգտվողը (այսուհետ՝ Օգտվող) մուտք է գործում ԻԴ ՊՐԻՆՏ կայք կամ հավելված:
2. Կայք կամ հավելված (այսուհետ՝ Համակարգ) մուտք գործելուց հետո Համակարգը՝ հնարավորության դեպքում, ինքնաշխատ եղանակով տեղորոշում է Օգտվողի գտնվելու վայրը՝ ԻԴ ՊՐԻՆՏ կողմից մատուցվող ծառայություններն ավելի արագ կազմակերպելու համար, իսկ անհնարինության դեպքում՝ այն լրացվում է Օգտվողի կողմից:
3. Օգտվողը Համակարգում ընտրում է մատուցվող ծառայության տեսակը:
4. Մատուցվող ծառայության տեսակն ընտրելուց հետո Համակարգի կողմից ներկայացվում են տվյալ ծառայության համար նախատեսված տարբեր ձևանմուշներ:
5. Ընտրելով համապատասխան ձևանմուշն Օգտվողը լրացնում է պահանջվող տեղեկությունները: Համակարգը հնարավորություն է տալիս նաև ներբեռնել լոգոներ և այլ պատկերներ, ընտրել հնարավոր կարգավորումներ, ինչպես նաև ստեղծել QR կոդ:
6. Պահանջվող տեղեկությունները լրացնելուց հետո Համակարգն Օգտվողին է ներկայացնում մատուցվող ծառայության դիմաց վճարման ենթակա գումարի չափը, վճարման եղանակը և այն ընտրելուց հետո ինքնաշխատ տեղափոխում վճարումների կատարման էջ:
7. Վճարումը կատարելուց հետո Համակարգի կողմից Օգտվողին են ներկայացվում իր գտնվելու վայրին առավել մոտ գտնվող տպարանների ցանկը:
8. Ընտրելով համապատասխան տպարանը, Համակարգի կողմից Օգտվողին են ներկայացվում մատուցվող ծառայության ավարտի ժամը (վերջնական արտադրանքի պատրաստի լինելու ժամը), իսկ այն առաքումով ստանալու դեպքում նաև առաքանին ստանալու ժամը:
9. Վճարումը կատարելուց մինչև տպարանի ընտրության պահը Օգտվողն իրավունք ունի հրաժարվել մատուցվող ծառայություններից, որի դեպքում վերջինից գանձվում է տույժ՝ պատվիրված ծառայության արժեքի 10 տոկոսի չափով: